

ՄԱՐԻԵՏԱ ՈԱՇՈՅԱՆ

Ֆ.Մ. ԴՈՍՏՈՎԿԱԿԻՆ ԶԱՅ ՄՏԱԿՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՍԲ /19-ԲԴ ԴԱՐԻ ԿԵՐՋ ԵՎ 20-ԲԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ/

19-րդ դարում ռուս գրականությունը թռիչքային զարգացում ապրեց: Ռուսական ռեալիզմի տիտաններ դարձան Պուշկինը, Գոգոլը, Օստրովսկին, Ըչեդրինը, Տոլստոյը, Դոստոևսկին: Ռուսական ռեալիզմի կարևոր առանձնահատկությունն այն էր, որ ամենայն խորությամբ մերկացնելով ու խարազանելով գոյություն ունեցող իրականությունը, որոնում և գտնում էր կյանքում զեղեցիկ օրինակներ, դրական կերպարներ, որոնց միջոցով արտահայտում էր իր վեհ գաղափարները, իր հավատը դեպի մարդը, դեպի գալիքի լավը: Ըչեդրինը ռուս գրողներից պահանջում էր «նոր ուղիներ փնտրել ռուսական արծալի համար»¹, նորովի մոտենալ մարդուն և նրա ճակատագրի հարցերին: Ռուս մեծագույն գրողները / Գոգոլ, Տոլստոյ, Դոստոևսկի/ իրենց հանճարեղ ստեղծագործություններով /«Մեռած հոգիներ», «Ռևիզոր», «Հարություն», «Պատերազմ և խաղաղություն», «Ոճիր և պատիժ», «Կարամազով եղբայրներ»/ ոչ միայն ռուս, այլ համաշխարհային գրականության զարգացման գործում նշանակալի դեր ունեցան: Ինչպես նկատել էր գրականագետ Վ. Ժիրմունսկին. «Իր հասարակական պաթոսով, ազգասիրությամբ և սոցիալական հումանիզմով, 19-րդ դարի առաջին կեսին, ռուս գրականությունը ցուցաբերեց և ցուցաբերում է ավելի լայն ազդեցություն ողջ աշխարհի ռեալիստական գրականության վրա»²: Իսկապես, ռուս գրողները, իրենց անմահ ստեղծագործություններով, համաշխարհային ճանաչում ձեռք բերեցին: Մ. Գորկին, առանձնացնելով Տոլստոյին և Դոստոևսկուն, ասել է. «Երկու մեծագույն հանճարներ են. իրենց տաղանդի ուժով նրանք ցնցեցին ամբողջ աշխարհը... երկուսն էլ կանգնեցին, որպես հավասարներ, այն մարդկանց շարքերում, որոնց անուններն են Շեքսպիր, Դանթե, Սերվանտես»³:

Ռուս առաջավոր մտածողները չէին կարող դուրս մնալ հայ գրականության ուշադրությունից: Հայ մշակույթի լավագույն ներկայացուցիչները մեծ երախտագիտությամբ են նշել ռուս գրականության բարերար ազդեցությունը հայ գրողների զարգացման ընթացքի վրա: Բավական է հիշել «ամենայն հայոց

¹ Ըչեդրին, Երկերի լիակ. ժող., հ.8, Մ. 1973թ., էջ 463:

² Վ.Ժիրմունսկի, Համեմատական գրականագիտություն, Լենինգրադ 1979թ., էջ 72:

³ Մ.Գորկի, Երկերի լիակ. ժող., հ. 23, Մ. 1953թ., էջ 352:

բանաստեղծ» Հովհաննես Թումանյանի խոսքերը. «Սիրով և պատկառանքով խոնարհվում եմ ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև՝ Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դոստոևսկու, Տուրգենևի, Զեյսլի, Տոլստոյի և նրանց արժանավոր ժառանգների գրականության առջև, որի վրա կրթվել են մեր գրողներից և մտավորականներից շատ շատերը»⁴ :

19-րդ դարի 60-70-ական թթ. ռուս գրականության մեծագույն դեմքերից էր Ֆյոդոր Միխայելովիչ Դոստոևսկին։ Դեռ ժամանակին ռուս գրականագետ Բելինսկին՝ խրախուսելով երիտասարդ գրողին, ասել է. «Նրա տաղանդը պատկանում է այն կարգին, որոնք ըմբռնվում և ճանաչվում են ոչ միանգամից։ Նրա ասպարեզի ընթացքում կերևան շատ տաղանդներ, բայց կավարտվի նրանով, որ նրանց մասին կմոռանան հենց այն ժամանակ, երբ նա հասնի իր փառքի գագաթնակետին»⁵։ Այս կանխատեսումների մեջ ռուս մտածողը չէր սխալվել։ Իրոք, Դոստոևսկին բարդ, հակասական երևույթ էր։ Նրա ստեղծագործություններում ամեն մի արարք, ամեն մի գաղափար ուներ իր «դեմը» և «կողմը»։ Գրողը այդ ամենը բացատրում էր այսպես. «Ես դարի զավակն եմ, անհավատության և կասկածանքի զավակը մինչև մահ»⁶։ Շարունակելով մախորդ գրական ավանդույթները Դոստոևսկին համաշխարհային գրականության մեջ ստեղծում է ժամրային նոր համաձուլվածք, բարձր ողբերգական կերտվածքի փիլիսոփայական պրոբլեմային «բազմաձայն վեպ»։ Այդ մասին Մ. Բախտինը գրել է «Ինքնուրույն և անմիաձուլելի ծայրերի և գիտակցությունների, լիարժեք ծայրերի իսկական պոլիֆոնիան Դոստոևսկու վեպերի հիմնական յուրահատկություններն են։ Նրա երկերում ոչ թե բազում բնավորություններ և ճակատագրեր են զուգակցվում միասնական օբյեկտիվ մի աշխարհում՝ հեղինակային միասնական գիտակցության լույսի տակ, այլ հենց իրավիստասար գիտակցությունների բազմավորությունն է այստեղ զուգակցվում որոշ դեպքի միասնության մեջ պահպանելով իր անմիաձուլելիությունը»⁷։ Դոստոևսկու ստեղծագործությունների հետ համաշխարհային գրականության մեջ մտավ յուրահատուկ գեղարվեստական մի ձև, որը հենվում էր առաջին հերթին հերոսների հագեցմանության վրա։ Իր հումանիզմի շնորհիվ նա թափանցում էր մարդկային հոգու ամենախոր անկյունները և որոնում այն աննկատ կետերը, որոնք բացահայտում են մարդուն ամբողջությամբ։ Ինքնավերլուծությամբ մարդը կարողանում է ճանաչել իրեն և իր շրջապատը։ Նա անհատի ինքնագիտակցությունը կապում էր ողջ մարդկության կենցաղի հետ, ինչը կյանքի և մահվան փիլիսոփայությունն էր, բարու և չարի, աստծու և սատանայի կոնֆլիկտը։ Հարցերը, որոնք ողջ կյանքում տանջել են ռուս

⁴ Հ. Թումանյան, Երկեր, հ. 4, Երևան 1960թ., էջ 242։

⁵ Գ. Բելինսկի, Երկերի լիակ. ժող., Մոսկվա 1955թ., էջ 566։

⁶ Ֆ. Դոստոևսկի, Երկերի լիակ. ժող., հ. 27, Լենինգրադ 1984թ., էջ 27։

⁷ Մ. Բախտին, Դոստոևսկու գեղ. առանձ., Մոսկվա 1972թ., էջ 45։

գրողին հին են, ինչպես աշխարհը և նոր՝ վաղվա օրվա պես: Դրանք մարդու հարցերն են աշխարհի մասին, երջանկության և կյանքի իմաստի մասին: Բարձրացնելով և լուծելով համամարդկային բնույթի հարցերը Դոստոևսկին ցույց է տալիս կյանքը ճանաչելու իր ինքնատիպ ճանապարհը: Հաճախ երջանկությանն ու կյանքի իմաստը հասկանալուն մարդը հասնում է տառապանքի շնորհիվ: Դոստոևսկուն է տրված մարդկային շնորհներից ամենաարժեքավորը՝ տառապանքը՝ հանուն մարդկային սիրո: Դոստոևսկու համար տառապանքը այն բանալին է, որը մարդուն օգնում է հասկանալ ուրիշի վիշտը, հույզերը: Մարդը իրավունք չունի փակվել իր մեջ և ապրել ինքն իր համար: Նա իրավունք չունի անտեսել և շրջանցել այն դժբախտությունները, որ գոյություն ունեն աշխարհում: Դոստոևսկին, խոր անկեղծությամբ, օգնում էր մարդուն հասկանալ իրեն շրջապատող աշխարհը: Նա կերտել է ուժեղ կամքի և մեծ գիտակցության տեր մարդկանց, որոնք փորձում են լուծել կեցության հիմնական հարցերը: Հասարակությունը հաճախ է մարդկանց դնում բարդ իրավիճակների մեջ: Մարդու և հասարակության փոխհարաբերություններից ծնվում է անհատի հոգևոր վերածնության հարցը: Դոստոևսկին իր ստեղծագործական մեթոդի մասին ասել է. «Ինձ հոգեբան են կոչում... ճիշտ չէ, ես միայն ռեալիստ եմ բարձրագույն իմաստով, այսինքն պատկերում եմ մարդկային հոգու բոլոր խորքերը»⁸: Նա իր ողջ կյանքում փորձել է լուծել, բացահայտել մարդու զաղտնիքը, գտնել «մարդու մեջ մարդկայինը»: Դոստոևսկու հերոսներից յուրաքանչյուրը ունի իր աշխարհընկալումը, որով ձգտում է իմաստավորել սեփական եսն ու իրեն շրջապատող աշխարհը: Գրողի համար կարևոր է ոչ թե այն, թե ինչպիսին է հերոսն աշխարհում, այլ՝ աշխարհն ինչպիսին է հերոսի համար: Չմայած իր ստեղծագործություններում մռայլ գույներով արտահայտված ողբերգական թեմաներին, Դոստոևսկին լավատես գրող է: Նա համոզված է, որ մարդը կարող է վերածնվել բարոյական ինքնամաքմամբ, տառապանքի շնորհիվ: Կենսասեր Դոստոևսկին գրել է. «Կյանքը հիասքանչ է, և պետք է այնպես անել, որ յուրաքանչյուրը դա հաստատի երկրի վրա»⁹:

Ուս առնակազիր Դոստոևսկու հումանիզմը, հոգեբանական վերլուծությունների խորությունը իրենց որոշակի նշանակությունն են ունեցել հայ առաջադեմ գրականության զարգացման գործում: Գրողի անողոք ռեալիզմը, հիվանդ խղճի տառապանքը սրտամոտ ու հարազատ են եղել հայ մտավորականներին: Հայ հասարակությունը Դոստոևսկու ստեղծագործություններին ծանոթ էր դեռ գրողի կենդանության օրոք: Սակայն նրա ստեղծագործությունների նկատմամբ հետաքրքրությունը մեծանում է 19-րդ դարի 80-ական թվականներից հետո: Արդեն 1881թ. հայ իրականությունը նրա երկերը համարում էր «երևելի

⁸ Ֆ. Դոստոևսկի, Երկերի լիակ. ժող., հ. 27, Լ. 1984թ., էջ 65:

⁹ Ֆ. Դոստոևսկի, Երկերի լիակ. ժող., հ. 24, Լ. 1982թ., էջ 243:

մատենագրի բանաստեղծ հոգեբանի աշխատություններ, որոնք ընթերցողին հիացնում են նրանով, թե որքան լավ էր հեղինակը ծանաչում մարդկային սիրտը և հոգու ամենանուրբ շարժումները, որոնք հայտնի ցույց են տալիս մեր ժամանակը, նորա ամենահագվագյուտ անկեղծությունը և մաքուր ու վսեմ սերը»¹⁰։ Ռուս գրականության հետ հայ ընթերցողին ծանոթացնելու գործում անգնահատելի է մամուլի կատարած աշխատանքները /Աշակ, Սեղու Յայաստանի, Սասիս, Արևելք/։ Հայ մամուլը ոչ միայն թարգմանում և տպագրում էր ռուս գրականության առանձին նմուշներ, այլ նաև մամրամասն պատմում էր ռուս գրողների Պուշկինի, Տուրգենևի, Տոլստոյի, Դոստոևսկու կյանքի և ստեղծագործությունների մասին։ Պա հնարավորություն էր տալիս ռուսերեն չիմացող հայ ընթերցողին մշտապես ծանոթ լինել գրական աշխարհում կատարվող կարևոր իրադարձություններին։ 19-րդ դարի 70-80-ական թթ. ռուս գրականության տարածման գործում մեծ աշխատանքներ են տարել Արփիար Արփիարյանը, Լևոն Բաշալյանը, Արշակ Չոպանյանը։ Նրանք հիացմունքով են խոսել նաև Դոստոևսկու անզուգական արվեստի մասին։

Արփիար Արփիարյանը հայ գրականության և հրապարակախոսության նշանավոր ներկայացուցիչներից էր, որը անխզելիորեն կապված էր 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ հասարակական-մշակութային կյանքի շատ երևույթների հետ։ Բարձր գնահատելով եվրոպական գրողներին /Ա. Դոդե, Է. Ջոլա, Կ. Հյուգո/ նա կոչ էր անում հետևել ռուսական ռեալիստական միտումներին, քանի որ Ռուսաստանում գրականությունը «սոսկ ժամանցի նյութ չէր, այլ մտքերի, սրտի վրա ազդող հզոր ուժ. ինչ որ մեզ համար համանդամ մըն է, հոգվույն հանապազօրյա հացն է անոնց համար»¹¹։ Ռուս գրականության մեջ նա տեսնում էր կյանքը վերափոխելու անհրաժեշտության գիտակցումը։ Ռուս գրողները /Պուշկին, Տոլստոյ, Դոստոևսկի/ ռեալիստորեն արտահայտելով իրականությունը նպաստում էին կյանքը բարելավելուն։ 1884թ. Թիֆլիսից վերադառնալով Կ. Պոլիս Արփիարյանը ստանձնում է «Սասիս» շաբաթաթերթի խմբագրությունը։ «Սասիս» N3740-ում Գամառ Քաթիպայի թարգմանությամբ Պուշկինի «Ոսկե ձկնիկի» հրատարակության առթիվ, Արփիարյանը մի հոդված է գրում, որում բարձր է գնահատում նաև «տառապելոց և թշվառաց բանաստեղծ» Դոստոևսկուն։ Արփիարյանի խնդրանքով երվանդ Օտյանը, թեև ոչ բնագրից / ֆրանսերեն լեզվից/, բայց հայերեն է թարգմանել Դոստոևսկու «Նոթեր Սեռյալ տնից» ստեղծագործությունը։

Ֆ. Ս. Դոստոևսկու երկերի մասին ջերմորեն է արտահայտվել արևմտահայ ռեալիստական արձակի երևելի դեմքերից մեկը Լևոն Բաշալյանը։ Նա Դոստոևսկուն Տոլստոյի և Տուրգենևի հետ միասին համարում էր «ռուս

¹⁰ «Սեղու Յայաստանի», 1881թ., N 3-52:

¹¹ Ա Արփիարյան, Պատմություն ԺԺ դարու, Թյուրքիո հայոց գրակ., էջ 216:

վիպասանաց ամենափայլուն երրորդությունը»: Ապա առանձնացնելով Պոստոնսկուն՝ գրել է. «Ռուսիո այդ մեծ հեղինակը... յուր ընկերային վեպերուն մեջ նպատակ ըրած էր իրեն՝ երևան ածել ընկերության ամեն մի թաքուն վերքերը, ժողովրդյան ցավերն և գեղացվոյն՝ «մութիկին» տառապանքները»¹²: 1885թ. «Մասիս» ամսագրում Բաշալյանը տպագրում է «Պոստոնսկին և յուր գործերը» ծավալուն հոդվածաշարը/ «Մասիս» N 3754, N3755/: Այդտեղ նա վերլուծում է «Խեղճ մարդիկ», «Ստորացվածներն ու անարգվածները» ստեղծագործությունները և խորությամբ քննարկում «Ոճիւր և պատիժ» երկը: Բաշալյանը ցույց է տալիս, որ թշվառ Ղեվուշկինի, աղքատ ուսանող Ռասկոլնիկովի կերպարները գրողը ստեղծել է «հասարակության անողոր քողը մերկացնելու և բուժելու համար»¹³: Լ.Բաշալյանը շեշտը դնում էր այն գրականության վրա, որը ճշգրտությամբ վեր էր հանում հասարակության խոցերն ու վերքերը, հնչեցնում մարդկային հոգու ելևէջները: Պոստոնսկին, որպես իսկական գրող, կարողանում էր կարեկցել մարդկանց «բոլոր տառապանքներուն, որ դուրսեն կտեսնվին և անոնք, որ մութին մեջ մը կողկողին»:

Ֆ.Մ. Պոստոնսկու մասին սիրով ու երախտիքով է խոսել հայ գրաքննադատության մեծ ներկայացուցիչ Արշակ Չոպանյանը: Նա բարձր էր գնահատում ռուս գրականության մարդասիրական ոգին, «մարդկային ցավերուն, ընկերական միություններուն վրա տառապագին գթության զգացումը»¹⁴: Չոպանյանը ռուս գրողներից առանձնացնում էր Պուշկինին, Գոգոլին, Պոստոնսկուն: Գոգոլը իր ռեալիզմով հող նախապատրաստեց Տոլստոյի և Պոստոնսկու պես հզոր տիտանների համար: Նա ողջունում էր Պոստոնսկու նորարարությունը՝ գրողին համարելով «մարդկային նորագույն ուղեղին և նորագույն ջիղերուն թարգմանը»¹⁵: Չոպանյանը հասկանում էր, որ Պոստոնսկին թեև պատկերել է ռուսական կյանքը, սակայն դրանցում արտահայտել է ողջ մարդկության տառապանքը: Նա պատկերել է ոչ միայն ռուս մարդուն, այլ՝ առհասարակ մարդուն, որն արևի տակ իր տեղն էր փնտրում: «Պուշկին և Միցկևիչ» հոդվածում Չոպանյանը խոսելով երկու հանճարեղ բանաստեղծների մասին, զուգահեռներ է անցկացնում նաև Պոստոնսկու և Միցկևիչի միջև: Միցկևիչը լեհ ժողովրդի ոգեշունչ երգիչն էր, նրա ցավերի ու վշտերի արտահայտիչը: Չոպանյանի կարծիքով Միցկևիչը այնպիսի «ահաբկու խորություն մը ունի», որի հետ ոչ մի գրող չի կարող համեմատվել: Բայց «ռուս ժողովուրդը Միցկևիչի դիմաց հանելու համար Պոստոնսկի ունի, ան է իր ճշմարիտ բանաստեղծը»¹⁶: Եթե Միցկևիչը միայն իր ժողովրդի ցավի մասին էր երգում, ապա Պոստոնսկին

¹² «Մասիս», N 3807, 1886թ.:

¹³ «Մասիս», 1886թ., N 3807:

¹⁴ «Ամահիտ», 1899թ., թիվ 5-6, էջ 179:

¹⁵ Ս Չոպանյան, Երկեր, Ե. 1988թ., էջ 842:

¹⁶ Նույն տեղում:

արտահայտում էր համայն մարդկության տառապանքը բռնությունը, տգիտությունը, «կյանքին ընկերական և բնական բոլոր չափքներուն բազմապատիկ բռնին տակ»: Այս ամենից հետո Արշակ Չոպանյանը մի ընդհանուր եզրահանգման է գալիս. «Ղոստոկսկին մի մարդ է, որի մեջ ամեն ազգի և ամեն վիճակի մարդիկ եղբայր մը պիտի գտնեն»¹⁷:

Ինչպես տեսնում ենք, 19-րդ դարի 80-ական թթ. հայ գրականագետները հետաքրքրված էին Ղոստոկսկու արվեստով: Նրա ռեալիստական հայացքները, «թշվառների և խեղճերի» հանդեպ տածած սրտացավությունը, սոցիալ-հասարակական հարցադրումները ուշադրության արժանացան:

20-րդ դարի սկզբին նոր զարգացում ապրեց ղոստոկսկիագիտությունը ոչ միայն Ռուսաստանում, այլ աշխարհի տարբեր կողմերում: 20-րդ դարի գրականությունը Ղոստոկսկուց վերցնելով մարդու ընկալման և պատկերման եղանակները նոր ուղիներ էր որոնում մարդկային տառապանքները վերացնելու և երջանիկ կյանք ստեղծելու համար: Հայ գրականության մեջ նույնպես անհրաժեշտություն է առաջանում նորովի ներկայացնելու մարդուն: Վ. Տերյանը, խոսելով հայ գրականության գալիք օրվա մասին, համանուն գեկույցում ասել է. «Ամեն ինչ կա հայ գրականության մեջ չկա միայն մարդը, նրա հոգին, նրա միտքը նրա անհուն խորությունը, այն, ինչ Ղոստոկսկին անվանում էր «անդունդ իմ մեջ»¹⁸: Տերյանը գրականության մեջ առաջնային էր համարում մարդուն հոգեբանորեն ներկայացնելն ու նրա համար անծանոթ երևույթները բացատրելը: Ղոստոկսկու ստեղծագործությունները մարդուն նոր տեսանկյուններով մոտենալու լայն հնարավորություններ էին տալիս: Մարդկային հոգու այդ մեծ գիտակը, վիրաբույժի նման, ընթերցողների առաջ բացում էր բարդ օրգանիզմի ամենանուրբ թելերը, որն այլ կերպ կոչվում էր ներաշխարհ:

Հոգեբանական վեպի հայ ներկայացուցիչները /Ալ. Շիրվանզադեն, Նար- Ղոս. Հ. Օշական/ իրենց ստեղծագործություններում ձգտել են խոր վերլուծության ենթարկել մարդկային հոգու մղումները, բացատրել մարդու տարօրինակ ու անկանխատեսելի արարքները:

Հայ ըննադատական ռեալիզմի խոշոր ներկայացուցիչներից էր Ալեքսանդր Շիրվանզադեն, որն իր ստեղծագործություններով նպաստեց հայ գեղարվեստական արձակի և դրամատուրգիայի զարգացմանը: Դեռ պատանեկության տարիներին, հայ գրականությանը զուգահեռ, Շիրվանզադեն մեծ ոգևորությամբ ընթերցում էր նաև ռուս գրականություն. «Ես հափշտակվեցի գեղեցիկ գրականությանը և 1878թ. մինչև 1883թ. կարդացի ամբողջ ռուս գրականությունը»¹⁹:

¹⁷ Ա Չոպանյան, Երկեր, Ե. 1988թ., էջ 846:

¹⁸ Վ. Տերյան, Երկեր, հ. 3, Երևան 1963թ., էջ 94:

¹⁹ Ա Շիրվանզադե, Երկեր, հ. 10, Երևան 1962թ., էջ 543:

Նրան հատկապես հոգեհարազատ էին Լ. Տոլստոյի և Ֆ. Դոստոևսկու երկերը: Մի առիթով Շիրվանզադեն խոստովանել է. «Դոստոևսկու վեպերից հետո ոչ մի ռուս վիպական գեղարվեստական գրվածքի մեջ ես չեմ զգացել այդքան խորություն և այդքան գեղեցկություն»²⁰: 19-րդ դարի 80-ական թթ. Շիրվանզադեի գրած նամակները, հոդվածները վկայում են, թե ինչքան լավ է հայ արծակագիրը ուսումնասիրել Դոստոևսկու երկերը: «Իմ վերջին խոսքը» հոդվածում նա ռուս գրողին դնում է համաշխարհային մի այլ հանճարի Շեքսպիրի կողքին: «Հիանում եմ Շեքսպիրի և Դոստոևսկու արվեստով», - խոստովանել է Շիրվանզադեն: Նրան զարմացնում էր այս երկու գրողների ոճը, հերոսներին ինքնատիպ ներկայացնելու արվեստը: «Յագոն, Մակբեթը, Մարմելադովն ու Ռասկոլնիկովը գեղեցիկ են արվեստի մեջ միայն, և միայն այն պատճառով, որ ճշգրիտ են ներկայացված. եթե հոգեբանորեն ճշմարիտ նկարագրված չլիներին, կլիներին տգեղ և այլանդակ՝ ինչպես տգեղ և այլանդակ են այն անշնորք բանաստեղծների «տիպերը», որոնք կյանքի մեջ չունեն արդարացուցիչ մարմնացում»²¹: Շիրվանզադեն կարևորում է Դոստոևսկու մեթոդը և գտնում, որ «Գրողը իրականությունը պետք է որոնի ոչ թե իր նկարագրած հերոսների, տիպերի, բնավորությունների, այլ հոգեկան աշխարհայացողության և զգացումների մեջ»: Դոստոևսկու երկերում պատկերված հասարակական քառսը հաճախ դառնում է անհատի ողբերգական կործանման պատճառ: Շիրվանզադեն իր ապրած դարաշրջանը նմանեցնում էր Դոստոևսկու պատկերած աշխարհին: Մարդը, տարվելով դրան կուտակելու անհագուրդ մոլուցքով, կորցրել էր հասարակության մեջ իր մարդկային կերպարանքը: «Սերը դեպի ոսկին ջնջել ու անհետացրել էր լույսը խավարից, բարոյական անբարոյականից զատող բոլոր գծերը: Այստեղ էր, որ տեսա գալլի ախորժակով, վագրի ժանիքներով զինված բարեկամը բարեկամի դեմ, եղբորը եղբոր, որդուն հոր դեմ: Դրսից դիտողին թվում էր, թե ընկել է մի տեսակ գազանանոց, ուր ամենքը ամոթությունից կատաղել են և պատրաստ են իրարու կոկորդ կրծոտել»²², - իր դարաշրջանն է բնութագրում Շիրվանզադեն: Նա, ճշմարտացի արտացոլելով կյանքը, փորձում էր հոգեբանորեն բացատրել մարդկային ցանկությունները: Դրանը, կեղծիքը շարունակ փորձության են ենթարկում մարդկային դրական որակները: Կյանքի քառսում միշտ չէ, որ հնարավոր է ազնիվ մնալ: Այդ ամենը գիտակցելով՝ մարդը շարունակական պայքար է մղում հասարակության մեջ իր տեղն ու դիրքը գրավելու և պահելու համար:

Ա. Շիրվանզադեն ծեռնարկում է Դոստոևսկու ստեղծագործությունների բարգմանությունը: Ռուս գրողի երկերը խորապես կոզնեն մարդուն հասարա-

²⁰ Ա. Շիրվանզադե, Երկեր, հ. 10, Ե., 1962թ., էջ 548:

²¹ Ա. Շիրվանզադե, Ե., 1962թ., էջ 560:

²² Ա. Շիրվանզադե, Երկեր, հ. 5, Երևան 1988 թ., էջ 87:

կությունը լավ ուսումնասիրելու և ճանաչելու հարցում: 1934թ. նրա քարգմանությամբ լույս տեսան «Սպիտակ գիշերներ» և «Գեշ անեկդոտ» ստեղծագործությունները:

Հայ դասական գրականության մեջ հոգեբանական վեպի զարգացման և ամրապնդման գործում մեծ է Նար-Դոսի դերը: Ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում գրողին հուզել են մարդկային ճակատագրերը, նրանց ներքին ապրումներն ու մտորումները: Մի առիթով Նար-Դոսը խոստովանել է. «Եթե մի գրականություն ինձ վրա խոր և անջնջելի տպավորություն է գործել, այդ այն ժամանակվա ռուս գրականությունն էր համծինս Տուրգենևի, Դոստոևսկու, Գոնչարովի, Տոլստոյի, որոնց երկերից օգտվել են գրվածքներս հոգեբանորեն հիմնավորելու տեսակետից»²³: Մի շարք թեմատիկ-գաղափարական զուգահեռներ կարելի է տեսնել Դոստոևսկու և Նար-Դոսի ստեղծագործությունների միջև մարդու ներաշխարհի ռեալիստական վերլուծության խորացմանը նպաստող նամականի պատմելածը /«Խեղճ մարդիկ»-«Ամնա Սարոյան»/, հոգեբանական բարդ իրադրություններում ողբերգականորեն դատապարտված կերպարի կերտումը /«Ապուշը»-«Մահը»/: Առաջին ստեղծագործությունը, որը Նար-Դոսին ճանաչում բերեց, «Ամնա Սարոյան» վիպակն էր, որը դարձավ կյանքը ռեալիստական արվեստով արտացոլելու, մարդկային հոգեբանությունը և սոցիալական երևույթները գեղարվեստորեն վերլուծելու Նար-Դոսի հաջող փորձերից մեկը: Վիպակի նամակագրական ժանրը օգնում է հերոսուհուն երևալ իր հոգու ողջ անկեղծությամբ: Նա ընկերուհուն գրում է. «Շալի մեջ փաթաթվելով, վերցրի Դոստոևսկի և սկսեցի կարդալ, թեև կարդալու ամենևին ցանկություն չունեի... Դոստոևսկի ես երբեք չեմ սիրել, առաջ մի քանի անգամ փորձել էի կարդալ և ամեն անգամ էլ հենց առաջին երեսների վրա ծանծրացել ու մի կողմ եմ շարտել, բայց այս անգամ, չգիտես ինչու, նա գրավեց ինձ»²⁴: Դոստոևսկու երկերը շատ բան են տալիս մարդկային հոգուն և մտքին: Կյանքում հուսահատության պահեր ապրող մարդիկ հաճախ են Դոստոևսկու երկերում գտել պաշտպանություն: Այդ ամենը գիտակցելով է, որ Նար-Դոսը ծեռնարկում է Դոստոևսկու «Խեղճ մարդիկ» վիպակի քարգմանության աշխատանքները:

Հայ ռեալիստական արձակի վառ փայլատակուններից էր Հակոբ Օշականը: Նա ընդունում էր գրական երեք մեծությունների Բալզակ, Դոստոևսկի, Պրուստ, որոնք գրողի համար միայն անուններ չէին, այլ «իրենց կիրքերուն մեջ թիապարտները, իրենց ընելիքով հիպոսագրածները»²⁵:

Հակոբ Օշականը առաջին անգամ Դոստոևսկու ստեղծագործություններին

²³ Նար-Դոս, Երկեր, հ. 4, Երևան 1990թ., էջ 65:

²⁴ Նար-Դոս, Երկեր, հ. 1, Երևան 1989թ., էջ 453:

²⁵ Հ Օշական, Համապատկեր արևմտահայ գրակ., Լիբանան 1982թ., հ. 10, էջ 10:

ծանոթացել է 19-րդ դարի 90-ական թվականներին, երբ աշխարհայացք ձևավորելու համար օգտվում էր Արտաշես Չարությունյանի հարուստ գրադարանից: Ռուս գրողի ստեղծագործությունները այնպիսի խոր տպավորություն են թողնում Օշականի վրա, որ վերջինս թողնում է գրելը: Բայց Օշականը չի հեռանում գրականությունից և զբաղվում է գրաքննադատական գործունեությամբ: Նա առաջինը բացահայտեց և բարձր գնահատեց Վահան Թեքեյանի տաղանդը: Իր գործունեության ողջ ընթացքում Օշականը չէր հեռանում Դոստոևսկուց, որին համարում էր «Վեպին Աստվածը», որը սառնասրտորեն ներկայացնում էր զարհուրելի աշխարհի սև և մութ կողմերը: «Նոթեր Մեռյալ տնից», «Ապուլը», «Կարամազով եղբայրներ» ստեղծագործությունները մշտապես նրա ձեռքի տակ են եղել և գրաքննադատին խորհելու բազում աղիքներ տվել: Առաջին աշխարհամարտից հետո Օշականը կրկին վերընթերցում է Դոստոևսկի: Այս անգամ նա հաստատականորեն որոշում է գրող դառնալ: Չակոբ Օշականը Դոստոևսկու պատկերած աշխարհի և հայ ժողովրդի տառապանքի միջև նմանություն էր տեսնում: «Այդ աշխարհից դեպի հայ ժողովրդի ապրումները մի քայլ էր: Շատ չէր տարբերեր Սիպիրիա... թե Պոլիս: Ռուս ազնվականության, չինովնիկներուն փոխարեն մենք ունենք թուրքը»²⁶: Բայց այս համեմատության մեջ հայ գրողը առավելությունը տալիս է Դոստոևսկու հերոսներին, որոնք «ոճիրին մեջ իսկ մարդ են... Անոնք, որ տեսան թուրքերը հավաքական ոճիրին մեջ, անգեն մարդեր փողոտելու արարքը անորակելի հեշտանքի վերածնող, անոնք չեն հասկնար աշխարհը ուրիշ լույսի տակ»: Իր հետագա ողջ գործունեության ընթացքում Չակոբ Օշականը հավատարիմ մնաց ռեալիստորեն հերոսներին հոգեբանական վերլուծության ենթարկելու սկզբունքին բացահայտելով մարդու ներքին էությունը:

Ֆյոդոր Միխայելովիչ Դոստոևսկին մեծ ազդուկով և իր աշխարհայացքով, գրականություն բերած նորություններով դուրս եկավ ռուս մտածողության սահմաններից: Նրա գաղափարափիլիսոփայական երկերը ստիպեցին շատ մտածողների վերանայել կյանքի մասին ունեցած իրենց պատկերացումները: Գերմանացի փիլիսոփա Նիցշեն ռուս գրողին համարում էր մարդկային հոգու գիտակ խոստովանելով «Դոստոևսկին միակ հոգեբանն էր, որից ես կարող էի որևէ բան սովորել»²⁷: Չայ իրականության մեջ էլ, ինչպես տեսանք, Դոստոևսկու արվեստը անարժագանք չմնաց: Նրա խորհրդավոր և անսովոր աշխարհը շարունակում է այսօր էլ զարմացնել մարդկանց, քանի որ Դոստոևսկին պատկանում է այն բացառիկ գրողների թվին, որոնց ստեղծագործությունների նկատմամբ սերն ու համակրանքը ժամանակի ընթացքում ոչ թե խամրում է, այլ փայլում կյանքի ամենապայծառ գույներով:

²⁶ Չ Օշական, Չամապատեր արևմտահայ գրակ., Լիբանան 1982թ., հ. 10, էջ 84:

²⁷ ԼԼ Շեստով, Դոստոևսկի և Նիցշե, էջ 23: